«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ Կառավարության որոշման նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի N - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N 893-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 893-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 39-րդ կետի 1-ին ենթակետում «կոոպերատիվներ),» բառից հետո լրացնել «համայնքները (եթե տվյալ լիզինգի առարկան նախատեսված չէ ձեռք բերելու սուբվենցիոն ծրագրերով),» բառերը.

2) 4-րդ կետի՝

ա. 7-րդ ենթակետի «բ» պարբերությունը ճանաչել ուժը կորցրած.

բ. 8-րդ ենթակետում «հիմքերով» բառը փոխարինել «հիմքով» բառով.

գ. 12-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 13-րդ ենթակետ՝

«13) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը սույն կետի 12-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը լիզինգառուից ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում լիզինգառուի կողմից սույն ծրագրի N 8 ձևի հայտարարությունով ստանձնած պարտավորությունների մասին գրավոր տեղեկացնում է ձեռքբերված շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցի նախատեսված շահագործման վայրի մարզի համայնքին։».

3) 44-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 44.1-ին և 44.2-րդ կետեր՝

«44.1. Սույն ծրագրի 40-րդ կետի 3.6-րդ ենթակետով և 41.4-րդ կետով սահմանված պահանջներով շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոց ձեռք բերած լիզինգառուի կողմից սույն ծրագրի N 8 ձևի հայտարարությունով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մոնիթորինգը վերապահվում է շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցի նախատեսված շահագործման վայրի մարզի համայնքին։

44.2 Այն դեպքում, եթե սույն ծրագրի 44.1-ին կետի շրջանակներում իրականացված մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվում է լիզինգառուի կողմից սույն ծրագրի N 8 ձևի հայտարարությունով ստանձնած պարտավորությունների խախտում, ապա այդ մասին շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցի նախատեսված շահագործման վայրի մարզի համայնքի ղեկավարը 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ